ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 14

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

ք. Երևան

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ ՀՖՖ) Կարգապահական և էթիկայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նիստը (այսուհետ՝ Նիստ) կայացավ 2022թ. դեկտեմբերի 2-ին, ՀՀ, ք. Երևան, Խանջյան 27 հասցեում:

<u>Նիստին մասնակցում էին՝</u>

<u>Կոմիտեի անդամներ</u>

Կարեն Հովհաննիսյան	Կոմիտեի նախագահ
Ռուբեն Սինոյան	Կոմիտեի փոխնախագահ
Բաբկեն Ղալոյան	Կոմիտեի անդամ
Տիգրան Իսրաելյան	Կոմիտեի անդամ
Հայկուհի Ռշտունի	Կոմիտեի անդամ, Կոմիտեի քարտուղար

Կոմիտեի նիստին մասնակցում են Կոմիտեի անդամներից 5-ը, հետևաբար, ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (այսուհետ՝ Կանոնակարգ) 7-րդ հոդվածի 7.01 կետի համաձայն՝ Կոմիտեն իրավազոր է:

Նիստն արձանագրում է Կոմիտեի քարտուղար Հ. Ռշտունին:

Կոմիտեի նախագահը ներկայացրեց Կոմիտեի նիստի օրակարգում ընդգրկված՝ ներքոնշյալ հարցերը:

Հաշվի առնելով ենթադրյալ կարգապահական խախտման գործով Կոմիտեի անդամ Բաբկեն Ղալոյանի՝ այլ հանգամանքներով ներգրավվածությունը՝ վերջինս, ղեկավարվելով Կանոնակարգի 10.02 կետով, հայտնեց ինքնաբացարկ և չմասնակցեց օրակարգի 1-ին և 4-րդ հարցերի քննարկմանը:

Կոմիտեն, ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 3-րդ հոդվածով, 4-րդ հոդվածով, 5-րդ հոդվածով, 20-րդ հոդվածով, 21-րդ հոդվածով, 28-րդ հոդվածով և Կանոնակարգի այլ վերաբերելի հոդվածներով՝ օրակարգում ներառված հարցերի վերաբերյալ կայացրեց հետևյալ որոշումները.

1. **28.11.2022թ-ի «Լեռնային Արցախ»-«Վան» (ՊԼ-092) խաղի ժամանակահատվածում տեղի ունեցած ենթադրյալ կարգապահական խախտումների վերաբերյալ. 1) «Վան»**

թիմի ֆուտբոլիստ Գևորգ Նաջարյանի (43900) կողմից մրցակցի հասցեին հայհոյանքներ թույլ տալը, 2) «Լեռնային Արցախ» թիմի գլխավոր մարզիչ Արտաշես Արմոյի Ադամյանի (2316) կողմից գլխավոր մրցավարի հասցեին հայհոյանքներ թույլ տալը, 3) տոմսային համակարգի բացակայություն:

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

1) Հաստատված համարել «Վան» թիմի ֆուտբոլիստ Գևորգ Նաջարյանի (43900) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 41-րդ հոդվածի 17-րդ կետը՝ «Վան» թիմի ֆուտբոլիստ Գևորգ Նաջարյանին (43900) որակազրկել 3 խաղով և «ՖԱ Վան» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի երկուհարյուրհիսունապատիկի՝ 250.000 ՀՀ դրամի չափով:
2) Հարուցել թիվ 01/12 կարգապահական վարույթը և ձեռնարկել դրանից բխող անհրաժեշտ գործողություններ:
3) Հաստատված համարել «Լեռնային Արցախ» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 74-րդ կետը՝ «Լեռնային Արցախ» ՖԱ ՍՊԸ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հարյուրքսանապատիկի՝ 120.000 ՀՀ դրամի չափով:

2. **26.11.2022թ-ի «Ալաշկերտ-2»-«Միկա» (ԱԽ-099) խաղի ժամանակահատվածում «Ալաշկերտ-2» թիմի՝ նախախաղային խորհրդակցությանը չմասնակցելու վերաբերյալ:**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Ալաշկերտ-2» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 40-րդ կետը՝ «Ալաշկերտ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի քսանապատիկի՝ 20.000 ՀՀ դրամի չափով:

3. **26.11.2022թ-ի «Արարատ-Արմենիա»-«Ուրարտու» (ԳԽ-010) խաղի ժամանակահատվածում «Ուրարտու» թիմի երկրպագուների կողմից մի քանի անգամ ճայթրուկներ և ծխարձակող նյութեր կիրառելու վերաբերյալ:**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Ուրարտու» թիմի կողմից կարգապահական խախտումներ թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 24-րդ կետը՝ «ՖԱ Ուրարտու» ՄՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ 200.000 ՀՀ դրամի չափով:

4. **29.11.2022թ-ի «Սյունիք»-«Գանձասար» (ԱԽ-098) խաղի ժամանակահատվածում «Սյունիք» թիմի ֆուտբոլիստ Հայկ Խաչատուրի Հովհաննիսյանի (22554) և «Գանձասար» թիմի ֆուտբոլիստ Տիրան Տիգրանի Գասպարյանի (31060)՝ մարզադաշտում ծեծկռտուքի մասնակցելը:**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Սյունիք» թիմի ֆուտբոլիստ Հայկ Խաչատուրի Հովհաննիսյանի (22554) և «Գանձասար» թիմի ֆուտբոլիստ Տիրան Տիգրանի Գասպարյանի (31060) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 41-րդ հոդվածի 16-րդ կետը՝

Ա) «Սյունիք» թիմի ֆուտբոլիստ Հայկ Խաչատուրի Հովհաննիսյանին (22554) որակազրկել 2 խաղով և «Սյունիք ՖԱ» ՍՊԸ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի՝ 100.000 ՀՀ դրամի չափով,

Բ) «Գանձասար» թիմի ֆուտբոլիստ Տիրան Տիգրանի Գասպարյանին (31060) որակազրկել 2 խաղով և «Գանձասար ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի՝ 100.000 ՀՀ դրամի չափով։

5. **30.11.2022թ-ի «Ուրարտու»-«Արարատ-Արմենիա» (ՊԼ-094) խաղի ժամանակահատվածում տեղի ունեցած ենթադրյալ կարգապահական խախտումների վերաբերյալ. 1) «Ուրարտու» թիմի երկրպագուների կողմից ծխարձակող նյութ կիրառելը, 2) «Արարատ-Արմենիա» թիմի երկրպագուների կողմից մի քանի անգամ ճայթրուկներ և ծխարձակող նյութեր կիրառելը, 3) «Ուրարտու» թիմի՝ ֆլեշ հարցազրույցի համար ընտրված ֆուտբոլիստի չներկայանալը հարցազրույցին։**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

1) Հաստատված համարել «Ուրարտու» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 24-րդ կետը՝ «ՖԱ Ուրարտու» ՄՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի՝ 50.000 ՀՀ դրամի չափով,
2) Հաստատված համարել «Ուրարտու» թիմի և «Արարատ-Արմենիա» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 24-րդ կետը՝

   Ա) «ՖԱ Ուրարտու» ՄՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի՝ 50.000 ՀՀ դրամի չափով,

   Բ) «Արարատ-Արմենիա ՖԱ» ԲԲԸ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի՝ 100.000 ՀՀ դրամի չափով,
3) Հաստատված համարել «Ուրարտու» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով ՀՖՖ Պրոֆեսիոնալ ֆուտբոլի մրցումների անցկացման կանոնակարգի 41.02 կետը և Կանոնակարգի 40-րդ հոդվածի 80-րդ կետը՝ «ՖԱ Ուրարտու» ՄՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի՝ 100.000 ՀՀ դրամի չափով։

6. **29.11.2022թ-ի «ՎՖԴ-08»-«Գեղարդ-08» (15C1-010) խաղին «Գեղարդ-08» թիմի չներկայանալը և սեփական դիմումի համաձայն՝ «Գեղարդ-10» թիմի հետագա մասնակցությունից հրաժարվելը։**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Աբովյանի «Գեղարդ» ՖԱ» ՀԿ կողմից կարգապահական խախտումներ թույլ տալը և

Ա) հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 5-րդ կետը՝ «Աբովյանի «Գեղարդ» ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի քսանապատիկի՝ 20.000 ՀՀ դրամի չափով,

Բ) հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 3-րդ կետը՝ «Աբովյանի «Գեղարդ» ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի քսանապատիկի՝ 20.000 ՀՀ դրամի չափով։

Գ) հեռացնել «Գեղարդ-10» թիմին առաջնությունից՝ հաջորդ մրցաշրջանում միայն C խմբում հանդես գալու հնարավորությամբ։

7. 2022-2023 թվականների մրցաշրջանի ՀՖՖ մանկապատանեկան ֆուտբոլի մրցումների շրջանակներում մի շարք թիմերի կողմից առաջին վերահայտավորման ժամանակահատվածում հայտավորման ենթակա նվազագույն քանակի ֆուտբոլիստներ չհայտավորելու վերաբերյալ։

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել սույն արձանագրության Հավելված 1-ում նշված թիմերի կողմից ՀՖՖ Մանկապատանեկան ֆուտբոլի մրցումների կանոնակարգի 22-րդ հոդվածի պահանջների խախտումները և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 45-րդ կետը՝ Հավելված 1-ում նշված թիմերի ակումբների նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»։

Խախտում թույլ տված թիմերի ակումբներին ծանուցել երկրորդ վերահայտավորման ժամկետի (2023 թվականի փետրվարի 20-ից մինչև ապրիլի 20-ը) և դրա ընթացքում ՀՖՖ Մանկապատանեկան ֆուտբոլի մրցումների կանոնակարգի պահանջների պահպանման վերաբերյալ։

Հավելված 1

Առաջնություն	Թիմ	Հայտավորված ֆուտբոլիստներ	Նվազագույն քանակ	Հայտավորված անձնակազմ
Մ-16Ը1	Արտաշատ-07	15	18	1
Մ-15Բ	Արաքս-08	17	18	2
Մ-15Ը2	Օնոր-08	15	18	2
Մ-14Ը1	Արարատ-2-09	17	18	5
Մ-14Ը2	Բենտոնիտ-Իջևան-09	17	18	3
Մ-13Մ2	Բենտոնիտ-10	17	18	3
Մ-13Մ3	Լ.Արցախ-Վայք-10	17	18	1
Մ-12Մ2	ԽՄՕՄՄ-11	14	16	1
Մ-12Մ2	Արաքս-11	15	16	2
Մ-12Մ3	Ալաշկերտ-1-12	15	16	2
Մ-12Մ4	Արարատ-12	15	16	3
Մ-12Մ6	Բենտոնիտ-11	15	16	3
Մ-12Մ6	Տավուշ ՄԱ-12	16	16	0
Մ-12Մ6	Իջևան-11	15	16	3
Մ-12Մ6	Վեստ Արմենիա-Իջևան-11	17	16	0
Մ-12Մ7	Գետափ-Գլաձոր-11	19	16	0
Մ-12Մ7	Վեստ Արմենիա-2-11	0	16	0
Մ-12Մ7	Վեստ Արմենիա-1-11	4	16	0
Մ-12Մ8	Դավթաշեն-12	15	16	1
Մ-10Մ2	Լ.Արցախ-Վայք-13	16	12	0
Մ-10Մ2	Եղեգնաձոր ՄԴ-13	10	12	1
Մ-10Մ2	Արենի-13	0	12	0
Մ-10Մ3	Բենտոնիտ-13	11	12	3
Մ-10Մ3	Վաչիկ-13	10	12	3
Մ-10Մ3	Վեստ Արմենիա-Իջևան-13	12	12	0
Մ-10Մ4	Ոսկեվազ-13	10	12	1
Մ-10Մ4	Օշական-13	10	12	1
Մ-10Մ4	Աշտարակ-13	10	12	1
Մ-10Մ5	Կոշ-13	14	12	0
Մ-10Մ6	Արաքս-13	9	12	2